ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-1

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն

(կազմակերպության անվանումը)

Ռաֆայել Բարխուդարյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է

(անուն, ազգանուն)

Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅՈՒՄ ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման

(Ծրագրի անվանումը)

նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 70,850,100 ՀՀ Դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում

են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 70,850,100 (յոթանասուն միլիոն ութ հարյուր հիսուն հազար հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև

65,182,092 (վաթսունհինգ միլիոն հարյուր ութսուներկու հազար իննսուներկու)

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի
	(կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/5
	(հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	հ/հ 163008200566, Հայէկոնոմբանկ
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 00009056
	Տնօրեն՝
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Ռ. Բարխուդարյան
	(անուն ազգանուն)
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«27» 01 2015թ.
N 27-1 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅՈՒՄ ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը Հիմնարար հետազոտություններ մաթեմատիկական անալիզի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության, դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների, մաթեմատիկական ֆիզիկայի ուղղություններով:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում) Միջազգային բարձր նորմերին համապատասխանող հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով, ստացված գիտական արդյունքների տպագրում գրախոսվող հայրենական և արտասահմանյան ճանաչված մաթեմատիկական ամսագրերում, նրանց ներկայացումը միջազգային գիտաժողովներում:
4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Ուղղություն Իրական և կոմպլեքս անալիզ

Թեմա 1. *«Անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաների հետազոտումը նրանց աստիճանային և Լապլասի շարքերի միջոցով: Մոտավորություններ անալիտիկ, մերոմորֆ և հարմոնիկ ֆունկցիաներով, կիրառություններ կոմպլեքս անալիզում և պոտենցիալի տեսությունում»*

Կոմպլեքս հարթության հարաբերական փակ բազմությունների վրա ուսումնասիրվելու են հավասարաչափ և շոշափումային մոտավորություններ օպտիմալ աճ ունեցող անալիտիկ ֆունկցիաներով և նրանց ենթադասերով (ներառյալ ամբողջ և մերոմորֆ ֆունկցիաների դասերը): Նման խնդիրներ հետազոտվելու են հավասարաչափ մոտավորությունների վերաբերյալ երկչափ և բազմաչափ Էվկլիդյան տարածություններում օպտիմալ աճ ունեցող հարմոնիկ ֆունկցիաներով:

Դիտարկվելու են օպտիմալ աճ ունեցող անալիտիկ ֆունկցիաներով հավասարաչափ-շոշափումային մոտավորության արդյունքների կիրառություններ անալիտիկ ֆունկցիաների Վայերշտրասյան տեսության խնդիրներում (աստիճանային շարքերի անալիտիկ շարունակության հնարավորության, նրանց եզակիությունների տեղաբաշխման հարցերը): Համապատասխանաբար ենթադրվում է հետազոտել հարմոնիկ ֆունկցիաներով օպտիմալ հավասարաչափ մոտավորության արդյունքների կիրառման հնարավորության հարցերը Լապլասի շարքերի տեսության մեջ:

Թեմա 2. *«Կոմպլեքս ֆունկցիաների երկրաչափական տեսություն, արժեքների բաշխում, կշռային տարածություններ»*

Հետազոտվելու են անալիտիկ ֆունկցիաների որոշակի դասերում ֆունկցիաների ներկայացման, միակության, արժեքների բաշխման վերաբերյալ հարցեր:

Թեմա 3 *«Միաչափ և բազմաչափ եռանկյունաչափական և ընդհանուր օրթոգոնալ շարքերի զուգամիտության և միակության հարցեր, բազիսներ ֆունկցիոնալ տարածություններում: Ոչ գծային մոտարկումներ, բազմաչափ ինտերպոլացիա»*

Ուսումնասիրվելու են հավասարաչափելի մարտինգալներ, ինչպես նաև մարտինգալների կիրառությունները բազմաչափ եռանկյունաչափական շարքերի ինտեգրելիության հայտանիշների հարցերում:

Նախատեսվում է շարունակել ուսումնասիրությունները Հաարի, Ուոլշի, Ֆրանկլինի և վեյվլետային համակարգերով շարքերի զուգամիտության և միակության հարցերում: Կուսումնասիրվեն նաև Գրիդի մոտարկումներն այդ համակարգերի համար:

Հետազոտվելու են բազմանդամներով բազմաչափ ինտերպոլացիաներ (միջարկումներ):

Դիտարկվելու են ֆուրյեի շարքերի զուգամիտության հարցեր տարբեր ֆունկցիոնալ տարածություններում, ինչպես նաև մասնական գումարների նորմերի գնահատականներ այդ տարածություններում:

Ուսումնասիրվելու /մշակվելու/ են ընդհանրացված մաքսիմալ ֆունկցիաների գնահատականներ և նրանց կիրառությունը միաչափ և բազմաչափ հարմոնիկ անալիզում:

Ուղղություն **Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն**

Թեմա 4. *«Ինտեգրալային և ստոխաստիկ երկրաչափություն»*

Հետազոտվելու է տոմոգրաֆիայի խնդիրներ ուռուցիկ մարմինների և պատահական երկրաչափական պրոցեսների համար, ինչպես նաև ուռուցիկ մարմինների վերականգնումը պրոյեկցիաներից:

Թեմա 5. *«Մաթեմատիկական ֆիզիկայի հավանականային խնդիրներ»*

Գիբսյան պատահական դաշտերը ուսումնասիրելու համար կդիտարկվի Մարտինգալային մեթոդի կիրառումը: Կդիտարկվի նաև հանրահաշվական մոտեցումը պայմանական բաշխումներով պատահական դաշտերի նկարագրման խնդիրներում: Նախատեսվում է պատահական դաշտերի նկարագրումը մեկ կետանոց պայմանական բաշխումների միջոցով և Գիբսի բանաձևի հիմնավորումը:

Հետազոտվելու են ոչ հակադարձելի դինամիկ համակարգերի հետ զուգորդված օպերատորային հանրահաշիվներ, ինչպես նաև նրանց հետ կապված կառուցվածքներ՝ ինվերս կիսախմբեր, երգոդիկ համակարգեր, քվանտային կոդավորման տեսությունում ուսումնասիրվող հանրահաշիվներ:

Նախատեսվում է շարունակել ուսումնասիրությունը քվանտային վիճակագրական ֆիզիկայի որոշ մոդելների վիճակագրական գումարի կլաստերային վերլուծություններում:

Ուղղություն **Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ**

Թեմա 6. *«Դիֆերենցիալ և ինտեգրալ օպերատորների հետազոտում»*

Շարունակվելու են դիֆերենցիալ հավասարումների համար որոշ եզրային խնդիրների սեփական ֆունկցիաներով վերլուծությունների զուգամիտության արագացման մեթոդների, ինչպես նաև սովորական եռանկյունաչափական և Հերմիտյան ինտերպոլացիաների զուգամիտության արագացման մեթոդների մշակումները:

Շարունակվելու են սինգուլյար ինտեգրալ հավասարումների լուծելիության, ինչպես նաև մատրից-ֆունկցիաների մասնավոր ինդեքսների հետ կապված խնդիրների ուսումնասիրությունները:

Ընդհանրացվելու են «ողորկ անցման» տիպի պսեվդոդիֆֆերենցիալ օպերատորների, ինչպես նաև L-փաթեթի տիպի օպերատորների հետ կապված արդյունքները:

Ուսումնասիրվելու են խոչընդոտի տիպի ազատ եզրով խնդիրներ մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների համար: Մասնավորաբար, ուսումնասիրվելու են գոյության, միակության հարցեր, ինչպես նաև մշակվելու են նրանց թվային լուծման ալգորիթմներ:

Ուսումնասիրվելու են որոշ կիսախմբերի ընդլայնումները և իզոմետրիկ ներկայացումները:

Որոշ դեպքերում տեսական արդյունքների հիման վրա ենթադրվում է մշակել համապատասխան ծրագրային փաթեթներ և անց կացնել համակարգչային փորձարկումներ:

Ուղղություն <u>Մաթեմատիկական ֆիզիկա</u>

<u>Թեմա 7.</u> *«Ինտեգրալ և ինտեգրա-դիֆերենցիալ հավասարումներ մաթեմատիկական ֆիզիկայում և պատահական պրոցեսներում»*

Հետազոտվելու է պատահական պրոցեսների ֆիլտրման տեսության ինտեգրալ հավասարումներ և մշակվելու է լուծման արդյունավետ մեթոդներ:

Մշակվելու է ինտեգրալ հավասարումների համակարգերի լուծման հատուկ մեթոդներ:

Նախատեսվում է Ճառագայթման տեղափոխման ընդհանուր մաթեմատիկական տեսության զարգացում, ոչ կոհերենտ ցրման խնդիրների արդյունավետ լուծում:

Դիտարկվելու են կրիտիկական դեպքում Համերշտեյնի ու Ուրիսոնի տիպի ոչ գծային ինտեգրալ հավասարումների լուծելիության հարցեր:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը <u>տարեկան հաշվետվություն:</u>

Տնօրեն՝ _____ <u>Ռաֆայել Բարխուդարյան</u>

(ստորագրություն) (անուն ազգանուն)

«27» 01 2015 թ. Հավելված 2
N 2-1 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅՈՒՄ ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ	մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով	Գրականության ուսումնասիրություն, Մաթեմատիկական աշխատանքների կատարում, Աշխատանքների ձևավորում և ձևակերպում, Տեղական և միջազգային գիտաժողովներում արդյունքների ներկայացում, Սեմինարների կազմակերպում, Համապատասխան մաթեմատիկական ալգորիթմների թվային փորձարկումներ, Ծրագրային փաթեթներ կազմում, Գիտական հոդվածների տպագրում	Միջազգային նորմերին համապատասխանող նոր գիտական արդյունքների ստացում, Գիտաժողովներում արդյունքների ներկայացում	31.12.2015	70,850,000
Ընդամենը						70,850,100

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի
(կազմակերպության անվանումը)

Տնօրենի՝
Ռ. Բարխուդարյան

(ստորագրություն)

Հավելված 3
«27» 01 2015թ.
N 2-1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅՈՒՄ ծրագրի
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն Ռաֆայել Բարխուդարյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել

«27» 01 2015թ. N 2-1 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 70,850,100 (յոթանասուն միլիոն ութ հարյուր հիսուն հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ (կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/5. (հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	հ/հ 163008200566, Հայէկոնոմբանկ ՀՎՀՀ 00009056
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ռ. Բարխուդարյան (անուն ազգանուն)
(ստորագրություն) ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	(ստորագրություն)

Հավելված 4
«27» 01 2015թ.
N 2-1 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	62813.8	12562.76	15703.45	15703.45	18844.14
2	տնտեսական և այլ ծախսեր	8036.3	1607.260	2009.075	2009.075	2410.890
3	ընդամենը	70850.1	14170.02	17712.525	17712.525	21255.03

Տնօրեն _____ (ստորագրություն) Ռաֆայել Բարխուդարյան (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Գոհար Հովհաննիսյան (անուն ազգանուն)

Կ.Տ.